

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ



891. 99  
Ա- 91

01 JAN 2009

19 NOV

№ 2. «ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՅԼԵՆՎԻԿ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ ԳԵՂԱՎԵՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 2.

591.99  
2-91

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

Զ Ո Ւ Բ Ե Յ Ի Դ Ա

Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Բ

ՅԵՐԵՎԱՆ — 1928 Թ.

28 FEB 2013

22096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՈՄԻՏԵ

Ս Բ Ի Գ Ժ Գ Գ Գ

ԶՈՒԲԵՅԻԴԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ I ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 1974  
ԳՐԱՌԵՊ. 579Բ. ՏԻՐԱԺ 2000



233354

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ,  
ՈՒՐ ԱՅՍ ՊԱՏՄԱՎԱԾՔԻ ՀԵՂԻՆԱԿԸ ԵՈՍՈՒՄ Ե ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԵՏ

Այս գիշեր ինչքա՛ն նոր լույսեր վառվեցին...

Այս գիշեր, յերբ դու, ընթերցող, որվա աշխատանքներիցդ հոգնած քնած էյիր, յես շրջում եյի Յերեանի յետին փողոցներով և լսում եյի, թե ինչպես քա՛ղցր տարածվում եյին մի գեղեցիկ յերգի հնչյունները...

Յես դիտեյի, վոր այս գիշեր նորից կլսեմ այդ յերգը և դրա համար ել տանից դուրս յեկա: Յերբ քայլերս ուղղեցի դեպի քաղաքի ծայրամասերը, հեռու, մթին թաղերը, նույնիսկ չեյի կասկածում, վոր հենց այդ տեղերումն ել կլսեմ յերգը:

Չսխալվեցի. այս գիշեր յես նորից լսեցի և այժմ իմ գլխում դեռ հնչում են այդ մեղմ յերգի յեղևեղները: Ամբողջ գիշերը լսեցի և մտածում եյի, վոր առավոտյան կգրեմ: Բայց գրեցի յերեկոյան: Իսկ հիմա, գրածս տալիս եմ քեզ կարդալու, վորպեսզի դու յեղ լսես այն, ինչ վոր յես լսեցի: Չե՞ր վոր դու, որվա աշխատանքներից հոգնած քնած էյիր, յերբ յես շրջում ու լսում եյի յերգը և այդ իմ պարտականությունն եր, — իմ իրավունքը...

Ո՞վ եր յերգում. — այդ չգիտեմ: Իսկ ի՞նչ եյին յերգում...



Յուրաքանչյուր տնից, յուրաքանչյուր սենյակից դալիս եր յերգի ձայնը: Նրանք ձայներն իրար ելին միախառնվում և թռչում ելին փողոցից-փողոց, առանց վրդովելու գիշերվա անդորրութիւնը: Նրանք յերգում ելին, վոր յուրաքանչյուր սլափի յետևում, յուրաքանչյուր առաստաղի տակ աճում և մի նոր ծիլ, բռնկվում և մի նոր լույս: Նրանք յերգում ելին այդ մթին փողոցներում, այդ փոքրիկ տնակներում աճող փոքրերի մասին, վորոնք վաղը կգան ավելի կզեղեցկացնեն այս աշխարհը և ավելի կշենացնեն:

Նրանք յերգում ելին հետևյալ առավոտվա մասին, յերբ ավելի կենսուրախ հարթնանան այդ ծայրամասերը:

— Մենք հին տարիների հետքերն ենք, բայց մոռացված ծայրամասեր չենք հիմի,— յերգում ելին նրանք:

— Մենք մեր մեջ աճեցնում ու մեծացնում ենք մեկ քանդողներին ու նորը կառուցողներին,— յերգում ելին նրանք:

Յեվ յես լսում ելի, թե ինչպես յուրաքանչյուր տան մեջ բարախում եր կյանքի յերակը:

Որը լուսանում եր, յերբ յես վերադարձա: Քաղաքի կենտրոնում, բաց-վող ուրվա լույսից արդեն դժգունացել ելին երեքտրական յամպերը:

Փողոցներում դեռ փոչոք չկար:

## ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԳ.

### ՎՈՐՏԵՂ ՊԱՍՏՎՈՒՄ Ե ԿԱՄՈՒԲՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Յերևանի կենտրոնում ընկած են բանուկ փողոցները: Նրանք յերկար շարքերով ձգվում են կողք-կողքի: Նրանք, յերկար շարքերի մի ուրիշ խմբով, կտրատում են նախկիններին:

Այդ բանուկ փողոցներից ամենավերջինը գտնվում և քաղաքի կենտրոնի և քաղաքի «անհետաքրքիր» մասի սահմանում և յերկար յերկողով անջատում է նրանց: Մի կողմում ընկած են ավելի մեծ փողոցները, կինոները, թատրոնը, սկումբները, հիմնարկները, մեծ և մի քանի հարկանի տները, իսկ մյուս կողմում համատարած գորչութիւնն է և ցեխով ծեփված պատերի խառնիխուռը պանորաման:

Յերկար ձգվում և այդ վերջին փողոցը: Վոչ մի լայն փողոց չի կտրում անցնում նրան: Յեվ թվում է, թե ճանապարհ չկա դեպի մյուս կողմը: Անձանոթ անցորդն անպայման այդպես կյենթաղրի:

Բայց այդպես չէ: Հազիվ նկատելի մի քանի նրբանցքներ, — նեկ, շատ նեկ նրբանցքներ ճանապարհ են բաց անում ջո դեմ:

Մտիւր այդ նրբանցքներից մեկը և գնա: Յերկար գնա: Նրբանցքը զիգզոտներ շատ ունի և մեկ այս կողմն է ծովում, մեկ մյուս: Բայց վորևէ այլ նրբանցք չի կտրում անցնում նրան: Դու չես կարող ճանապարհդ փոխել: Կամ ոչիտի վերադառնաս, կամ պիտի շարունակես նույն ծուռուծուռ նրբանցքով ստաջանայ:

Պատե՛րը: Պատերը ցեխապատ են և ցածր: Այնուամենայնիվ նրանք բարձր են քո հասակից և դու չես կարող նայել նրանց վրայով:

Յերբեմն հանդիպում ե՛մ քի փոքրիկ դուռ, պատերի նման գորշացած, չընկերված փայտից: Ի՞նչու են դեղձից յերևում և հայաթը:

Յերբեմն ցեխով ծեփված պատերի այդ յերկար և անընդհատ շարքի մեջ քեզ հանդիպում ե՛մ քի բարձր պատ, նույնպես ցեխով ծեփված ու գորշ: Նրա վրա, բարձրում, լինում են վառ կանաչ կամ վառ կապույտ ներկված յերկու պատուհաններ: Համատարած դորշության մեջ այդ վառ գույնի պատուհանները քեզ շատ են հետաքրքրում: Ի՞նչ կա նրանց յետևում... Բայց նրանք բարձր են և նրանց սպիտակ վարագույրների յետևից հաղիվ միայն յերեկում ե՛մ ծաղկանոթի մի մասը:

Շարունակիք ճանապարհը: Բալախան տեղ, ուշիկ ձգվում ե՛ նրբանցքը Գնա: Իմացը պատ ե, —բարձր պատ և թվում ե, վոր ճանապարհն այնտեղ վերջանում ե: Բայց հասնելով այնտեղ, դու քո մի կողմում կնկատես նրբանցքի շեշտակի կերպով թեքվող շարունակությունը: Մի քիչ գնալուց հետո նրբանցքը կլայնանա և ահա, դու դուրս կգաս մի փայտե կամուրջի դեմ:

Տակից հոսում ե փոքրիկ, շատ փոքրիկ Գետառ—չայ առուն: Քեզ կթվա, թե լայն փողոց դուրս յեկար: Լայն փողոց, վորի միջով սակայն, Գետառ—չայն ե հոսում, իսկ նրա յերկու կողմերում նույնպիսի տների պատեր կան, —ցեխածեփ, և նույնպիսի դռնակներ կան, —գորշագույն:

Վո՞ր նրբանցքով յեկար. —միևնույնն ե: Քո առաջ դուրս կգա փայտե կամուրջ: Այդ կամուրջներից այն կողմումն ընկնում ե քաղաքի գորշ մասը այն, վոր հեռվից յերևում ե շատ «անհետաքրքիր» և վորտեղ հին ժամանակներում ապրել ե խաների և աղանների աչքերից հեռու, նրանց ստրուկ ժողովուրդը:

Ահա թե ինչու վերջին մեծ փողոցը վոչ մի ճանապարհ չունի դեպի այս կողմ և նա յերկողմ, իրարից անջատում ե քաղաքի յերկու մասերը: Ահա թե ինչու նրբանցքներն հասնում են փայտե կամուրջներին և այդ կամուրջներից այն կողմ փոխված ե քաղաքի անծանոթ մասը:

Ինչի կամուրջը ձգվող նրբանցքի տներում և կամուրջից այն կողմ, ագրում են իմ Տերոսները: Նրանք բանվորներ են, արհեստավորներ, պարսիկ, թյուրք ու հայ:

Իսկ յեթե այդ նրբանցքներում և կամուրջներից այն կողմ հանդիպեն ավելի բարձր պատեր վառ գույնի լուսամուտներով, —այնտեղ ել ապրում են իմ «հերոսները»: Նրանք առևտրականներ են, իսանութպաններ, պարսիկ, թյուրք ու հայ:

Կամուրջները, առուն և առվի մյուս կողմը գտնվում են քաղաքի արեվելյան մասում, ամբողջ քաղաքի յերկարությամբ: Իսկ հյուսիսային կողմում, մի բարձր բլրի վրա, չըջապատված ծառաշատ ձորերով, նստել ե Նորքը, վորը քաղաքի հետ կապված ե այգիների միջով անցնող մի նեղ ճանապարհով և վորը քաղաքից անջատված ե մի փայտե կամուրջով: Յես նրա մասին այստեղ չեմ խոսում: Մի ուրիշ անգամ:

Քաղաքի արեվմտյան կողմում, ամբողջ քաղաքի յերկարությամբ ձգված ե մի բլրաշարք և նրանց վրա գտնվում ե քաղաքի Կոնդ թաղամասը: Կոնդը բարձր և քաղաքից: Բլուրի լանջի վրա, մինչև ծայրը, շարքերով կառուցված են տնակները և մի շարքի կառույցները ավելի վերեվի շարքի դետնին են հավասար:

Լուսամուտներն ու պատշգամբները նայում են քաղաքին: Այդ լուսամուտների յետևում և այդ պատշգամբներում յերեկոները նստում են մարդիկ և նայում են ներքև, քաղաքին, վորտեղ յերևում են լազամաթիվ լույսեր ու փողոցներ:

Բլուրի մյուս լանջի վրա, մինչև ձորը, մինչև Զանգուն, փոխված ե քաղաքի Զորազեղ թաղը: Բայց նրա մասին ես, մի ուրիշ անգամ:

Հարավում բազարն է: Ավելի հարավում՝ չայխանաները, պանդոկները և նորից չայխանաներն ու պանդոկները: Նրանք ևս, գտնվում են քաղաքից բարձր: Ներքեվում, բազարն է, իսկ ավելի այս կողմ, քաղաքի կենտրոնը:

Այդ բոլոր թաղերում կան նեղ նրբանցքներ, լաբիրինթոսի նման խուռնի-խուռը, բազմաթիվ, իրար կտրտող, փակուղիներով...

Սակայն բավական է վոր բարձրանաս վարեւ բարձր տեղ և այնտեղից նայես ներքև, դեպի այդ «լաբիրինթոսը», վորպեսզի տեսնես նրա ամբողջ պարզութունն ու խղճուկութունը: Մի հարվածով կարելի չե յուծել նրա դադանիքը:

Այդ յետ ընկած թաղերում գտնվում են բաղանիքները: Գետնափոր, ամբողջովին գետնի տակ չինված, վորոնց զմբեթածև կտուրներն են միայն, վոր գետնից մի քիչ վերև են բարձրացել: Առանձին համարներ չունեցող ընդհանուր լողարաններ են դրանք, — պարսկական բաղանիքներ:

Այդ յետ ընկած թաղերում գտնվում են յեկեղեցիներն ու մզկիթները: Յեկեղեցիներն ունեն ընդարձակ հայաթներ, վորոնց կենտրոնում գտնվում է յեկեղեցին: Մզկիթներն ընդհակառակը, կանգնած են իրենց բարձր պատերով և այդ բարձր պատերի յետևում, շենքի ներսումն են գտնվում նրանց հայաթները:

Այդ յետ ընկած թաղերից մեկում, բազարից մի քիչ այն կողմ, գտնվում են չայխանաները: Խանութի նման, նրանք փողոցի վրա փեղկեր ունեն, իսկ ներսում չայխանան է, վորը բաղկացած է մի սենյակից: Կան չայխանաներ, վորոնց խորքի անկյուններից մեկում գտնվում է մի սանդուխք, փայտե կամ քարե աստիճաններով: Աստիճանները տանում են վերել, դեպի վերնահարկը, վորտեղ մի շարք թախտեր կան, կեղտոտ անկողիներով:

Գիշերելու տեղն է դա:

Այդ յետ ընկած թաղերից մեկում, չայխանաների թաղում, գտնվում են խաները (պանդոկները): Ընդարձակ բակեր են դրանք, վորտեղ միշտ լինում են սայլեր, Փուրղոններ, ձիեր, եշեր... Բակի մեջ կան նաև սենյակներ, վորոնցից մեկը խանի չայխանան է, մյուսը գիշերելու տեղը: Նրանց անմիջապես կողքին, գտնվում են ախոռները:

Հին Յերեվանն է դա, — յետ ընկած թաղերի այդ շրջանակը, վորն սղակել է քաղաքը: Այդ թաղերում աճում ու մեծանում են նրանք, ովքեր պիտի քանդեն նրանց և նրանց փոխարեն նոր կառուցում սկսեն...

Իյուլիոստանի վարդն էս,  
Ջահենների դարդն էս,  
Ծաղկանոցի զարդն էս,  
Զուբեյիդա,  
Ո՞վ քաղե ջու վարդից,  
Ո՞վ մեռնի ջու դարդից,  
Իու չես ծնվել մարդից,  
Զուբեյիդա

Ալաջպեր Հասան-ողլու չայխանան այդ յերեկոյան լիքը լցված էր մարդկանցով: Եարժվելու տեղ չկար: Ինքն Ալաջպերը, իր սղնականի, տասնվեց տարեկան Իբրահիմի հետ միասին, հազիվ էլ յին կարողանում իրար յետեվից հաճախորդներին «չիրին-չայ» հասցնել: Իսկ յերբ հաճախորդներից մեկն ուզում էր ընթրել և «փիթի» յեր պահանջում, Իբրահիմը հազիվ էր դուրս պրծնում դռնից, դիմացի «քյարաբխանայից» ընթրիք բերելու համար: Դրսում, Ալաջպերի չայխանայի դռների մոտ հավաքվել էլին մարդիկ և հետաքրքրությամբ նայում էլին ներս: Հավանական է, վոր նրանք փող ունեյին և գրա համար էլ ներս չեյին մտնում: Յերբեմն միայն, հավաքված

ների խմբին մոտենում եր մեկը, ճանապարհ եր բաց անում դեպի դուռը և մտնում եր ներս: Յեվ չնայած նրան, վոր ներսում նստելու տեղ չկար, նա դարձյալ գտնում եր մի նեղ անկյուն ու նստում եր: Մինչև նրա նստելը Ալաք պերն աչքերով հետեւում եր նրան, ապա, սրբիչն ուսին գցած, մոտենում եր և կիսատպիտ շողոքորթությամբ հարցնում.

— Շիրին-չա՞յ . . .  
— Շիրին-չա՞յ . . .

Ամբողջ սենյակը լցված եր ետան ծխախոտի դաւը ծխով և մարդիկ յևրևում էյին կիսամշուշի մեջ: «Իսխիլ» վրա թշուրմ եր մեծ հեշտայնուր: Ալաքպիրը թեյ եր լցնում, իսկ Իբրահիմը բաժանում եր հաճախորդներին: Սեղանների վրայից նա հավաքում եր դատարկ բաժակները, վորոնք Ալաք պերն անմիջապէս լվանում եր և սրբում ուսի վրա գցած սրբիչով:

Ներսում հավաքվածները նստել էյին սեղանների մոտ, յերկար նստաբանների վրա, պատերի տակ, սակայն այնպես, վոր բոլորի դեմքերն էլ ուղղված էին դեպի միևնույն կողմը: Աղմուկ չկար: Միայն լսվում եր համատարած մի դժոց և լվացվող բաժակների չխշխկոցը «դախիլ» կողմից:

Հավաքվածների մեծ մասը գյուղացիներ էյին, պարսիկ և հայ գյուղացիներ: Կային նաև արհեստավորներ ու մի քանի բանվորներ:

Ի՞նչն եր պատճառը, վոր այդ յերեկոյան Ալաքպերի չայխանայում այդքան մարդ կար հավաքված: Յեվ ի՞նչն եր պատճառը, վոր հավաքվել էյին վոչ միայն ներսում, այլև դրսում, դռների մոտ:

Պատճառն այն եր, վոր հեռու տեղից աչուղ եր յեկել և այդ յերեկոյան Ալաքպերի չայխանայում հեքիաթ եր պատմում: Յերկու ժամ առաջ եր սկսվել հեքիաթը և առաջին մասը վերջացել եր: Այժմ, աչուղը նստել էր սեղաններից մեկի մոտ և թեյ եր խմում:

Իսկ քիչ հետո պիտի շարունակեր հեքիաթը:

Աչուղ Հաֆիզ-Չաղեն, հիսուն տարին անց մի առույգ ծերունի յեր, յերկարահասակ և համեմատաբար նեղիրան: Նրա վերին շրթունքի վրա բուռն էյին յերկար, բայց ցանցառ բեխերը. մորուք բոլորովին չուներ: Գլխին դրել եր բուխարական նախշուն գլխարկ, վորը պինդ կերպով նստել եր նրա ճաղատ գլխի վրա: Կողքին, նստարանի վրա նա դրել եր իր սազը: Նա թեյ եր խմում և խոսում եր իր սեղանակից վաճառականների հետ:

Հեռու տեղից եր յեկել Հաֆիզ-Չաղեն և շատ նորություններ գիտեր: Նա, որինակ, գիտեր թե ինչ արժի թուղը Բիրմանշահում, չամիչը Թավրիզում կամ չիրը Որդուբաղում: Յեվ վաճառականներն հետաքրքրությամբ լսում էյին նրան ու յերբեմն էլ իրենց ծոցի դավթարներում մատիտով ինչ վոր բաներ էյին նշանակում:

Մյուս սեղանների մոտ նստել էյին հողի մարդիկ՝ պարսիկ ու հայ գյուղացիներ, քարի մարդիկ՝ պարսիկ ու հայ արհեստավորներ: Նրանք փոքր կումերով ֆոթացնում էյին թեյը և մտածում հեքիաթի վերջավորության մասին:

— Հե՛-հե՛-հե՛, Չուբեյիդա, Չուբեյիդա . . . լսվում էյին յերբեմն բայականջություններ:

Յեվ այդ ժամանակ դիմացը նստած մի ուրիշը լուր որորում եր գլուխը կարծես ի նշան համաձայնության:

— Բարի լուար բացվի ձեր վրա, վոնց վոր բացվեց Չուբեյիդայի սիրելին Իսկյանդարի վրա . . .

Մի վայրկյանում ամեն ինչ լուեց: Ղժոցն էլ, խոսակցության ձայներն էլ, Բաժակների չխշխկոցները ցածրացան:

Աչուղը, սաղը ձեռքին, նորից կանգնել եր դախիլ և սեղանների միջև յեղած ազատ տարածության մեջտեղում և պատմում եր, համարպատասխան շարժ ու ձեւներով.

— . . . Կողքը նայեց Իսկյանդարը, տեսավ, — ի՞նչ տեսնի վոր լավ լինի տեսավ, Չուբեյիդան չկա:

Աչուղը յերկու քայլ արեց դեպի պատը և կանգնեց:

— Չուբեյիդա՛, ասաց Իսկյանդարը . . .

Տեսավ, — ձայն չկա . . .

Աչուղն արագ փոխեց յերեք քայլ և մոտեցավ դռանը: Բոլորի աչքերն հառած էյին նրա վրա:

— Հա՛, տեսավ վոր Չուբեյիդան չկա, նստեց յայ յեղավ: Լաց վոր յեղավ պրծավ, եսպես յերգեց:

Աչուղը սաղը տնկտնկացրեց մատներով, ապա մի քիչ նվազելուց հետո սկսեց բայաթին.

— Հե՛-եհե՛-եհե՛-եհե՛ . . .

Բոլորի կրծքից հառաչանք թռավ: Մի քանիսը ձեռքները գրեցին ա-կանջներին:

Գյուլիստանի վարդն ես,

Ջահեղների դարդն ես,

Մաղկանոցի գարդն ես,

Չուբեյիդա,

Ո՞վ քաղե քու վարդից,

Ո՞վ մեռնի քու դարդից,

Իու չես ծնվել մարդից,

Չուբեյիդա

Յուրաքանչյուր սոււնը յերգելուց հետո աչուղը տնկտնկացնում եր սաղը, իսկ հավաքվածներն ընդմիջումից ողտվելուց, «հե՛յ վա՛խ» էյին կանչում:

— Արեվը յոթը գազ բարձրացավ: Արեվը վոր յոթը գազ բարձրացավ, Իսկյանդարին խարար բերեցին, թե՛ ա՛յ Իսկյանդար, Չուբեյիդային փախցնողն Ոքոուղ-ողլին է . . .

Նստարանների և աթոռների վրայից, վոչխարի միամիտ հայացքով դեպի աչուղն էյին նայում բազմաթիվ դույզ աչքեր:

Բաղժաթիլով բերանները զարմանքից կիսաբաց, նորածիլ բեխեր, միամիտ, գեղջկական հայացքներ և խորը հետաքրքրութուն:

Իսկ յերբ աշուղն սկսում էր նվաղել, նրանք,—հողի և քարի այդ մարդիկը ձեռքներն ականջներին ելին դնում, դանդաղ որորվում և հիշում ելին իրենց Ձուրեյիղաներին, իրենց Սանամներին ու Գյուլիղարներին: Յեվ կյանքը նրանց թվում էր անգույն, իրենց Սանամներն ու Գյուլիղարներն՝ անհրապույր: Գունադեղն ու հրապուրիչն անծանոթ աշխարհի այն հեքիաթն էր, յոր լայներախ դուրս էր հորդում աշուղի սազի լարերից:

Յեվ նայում էլին միամիտ հայացքներն ու լսում էլին հողի, քարի մարդիկ:

Վերջին նտարաններից մեկի վրա, պատի տակ, նստել էր քսանյերկու տարեկան Ահմեդը: Բոլորի նման, նա ևս լսում էր աշուղին և լսում էր հետաքրքրությամբ: Սակայն նրա աչքերում, փոխանակ վոյսարի միամտության, փայլում էլին մի դույզ ջահել կրակներ: Բորբոքված լսում էր նա Ձուրեյիղայի հեքիաթը և նրան թվում էր, յոր այդ հեքիաթն իր Ձուրեյիղայի մասին և,—ի՛ր Ձուրեյիղայի, յոր հեքիաթի փերի չի, այլ իրական աղջիկ, և սպրում է Գետաալայից այն կողմ, Ռումմի փողոցում:

Ահմեդը լսում էր աշուղին և մտածում: Հաճախ նրա միտքը կանգ չէր առնում և Ահմեդին տանում էր հեռու: Նա սկսում էր վերհիշել ամեն ինչ սկզբից, ամեն ինչ, մինչև յերեկ: Յեվ յերբեմն նա նայում էր դեպի դուրս,—փողոց: Նույնիսկ մի յերկու անգամ յետ դարձավ և պատի ժամացույցին նայեց:

Իսկ հետո, սկսեց նորից մտածել:

Ահա, ինքը, Ահմեդը, նստել և այստեղ, չախմանայում, լսում և աշուղին և մտածում է: Իսկ ո՞ւր է հիմի Ձուրեյիղան:

Յերեկի դպրոցում կլինի:

Բիչ հետո, ժամանակը կզա և Ահմեդը վեր կկենա: Նա կզնա դեպի Թուրքական դպրոցը և կսպասի: Ձուրեյիղան դուրս կզա դպրոցից և քայլերը կուղղի դեպի տուն: Նա կնկատի Ահմեդին և ընկերուհիներից կանջատվի: Անկյունին հասնելիս Ահմեդը կմոտենա և սամաչկոտ ժպիտով կբարևի:

—Բարև:

Ձուրեյիղան կասի.

— Բարև, Ահմեդ:

Իսկ հետո, ալեկի կամաց ձայնով.

— Հը՞, Ահմեդ:

Ահմեդը չի խոսի:

— Ելի՞ յես յեկել, — կասի Ձուրեյիղան:

Ահմեդն ելի չի խոսի:

— Մարդ դարձիր: Լավ մարդ վոր դառնաս. քեզ կասնեմ, կասի Ձուրեյիղան ու կհեռանա:

Ախր վո՞նց անի Ահմեդը, վոր մարդ դառնա, Ձուրեյիղա: Դու դպրոց ևս դնում, սովորում ևս ու շուտով կվերջացնես: Իսկ Ահմեդն ի՞նչ անի: Դու հայր ունես, մայր ունես և քեզ պահում է հայրդ, վոր պատ շարող ուստա յե: Իսկ Ահմեդն ինչ անի: Ահմեդը հասարակ արհեստավոր է,—մեջքի վրա քար կրող հասարակ արհեստավոր:

Յեվ մտամոլոր, դեպի իր սենյակն էր վերադառնում Ահմեդը, ըթի տակին մրմոռալով հայերեն յերգը.—

Թե ինձ չեյիք առնի, ընչի՞ սիրեցիր,

Մե բուռ կրակ դարձար, սիրտս երեցիր...

Ահմեդին սթախեցրեց աշուղի ձայնը: Սազը ձեռքին, նա սկսել էր նոր յերգ, վորն յերգում էր վողեկվորված կերպով ու իր ձայնի ամբողջ ուժով:—

Ձուրեյիղա, Շիրադի վարդ,

Ձուրեյիղա, ծաղկունանց զարդ...

Ահմեդը հառաչեց: Վո՞րտեղից է յեկել այս աշուղը... վո՞րտեղից է բերել այս հեքիաթը... վո՞րտեղից է գտել Ձուրեյիղայի անունը... Ի՞ր Ձուրեյիղայի հեքիաթը չե՞ սա...

Պատի ժամացույցը, վոր մինչ այդ, աննկատելի կերպով չխչխկում էր, ինն անգամ լսեց: Ահմեդը վեր ցտոկեց: Ուշացել է: Արդեն դպրոցից դուրս յելան...

Ուշացել է...

Սակայն և այնպես, նա վույր վճարեց, արագ դուրս թուավ և բռնեց դըպրոցի ճանապարհը: Համարյա վաղելով նա հասավ դպրոցին և առանց անկյունում կանգնելու, առաջ անցավ:

Դպրոցի բոլոր լուսամուտներն էլ մուծն էլին: Վոչ մի տեղից լույս չէր յերեկվում: Նշանակում է դասերն արդեն վերջացել էլին:

Ահմեդն անշարժացավ: Ելեյի մանի աշուղ... իրեն ուշացրեց...

Նա կարծես չէր հավատում աչքերին: Յերեք ամիս է, վոր ամեն յերեկու նա դալիս կանդում է այն անկյունում և միշտ ժամանակին է յեկած լինում: Իսկ հիմի...

Դանդաղ շարժվեց Ահմեդը և ուղեվորվեց դեպի կապույտ մզկիթը, վորի ներսում,—խուցերում, սպրում էլին արհեստավոր պարսիկներ,— նաև ինքը:

Ճանապարհին նա մի քանի անգամ յետ դարձավ և նայեց դեպի դպրոցը, կարծես հուսալով, վոր այնտեղ նորից կվառվեն լույսերը: Իսկ յերբ բավական հեռացավ, խորը հառաչեց և արագացրեց քայլերը:

Իսկ նրա ականջներում դեռ հնչում էլին աշուղի յերգի խոսքերը.—

Ո՞վ քաղե քու վարդից,

Ո՞վ մեռնի քու դարդից,

Ձուրեյիղա...

ՔԼՈՒՆ ՀԻՆԿԵՐՈՐԴ

ՈՒՐԵՇ ԵՌԱՔՈՎ ԹՅՈՒՐԳ ՈՒ ՊԱՐՄԵԿ ԿԱՆԱՆՑ ԱԿՈՒՐԲԻ ՄԱՍԻ

Քաղաքի կենտրոնից թիչ հեռու, մի մութ և նեղ փողոցի մեջ գտնվում է պարսկական վոճի, կամարածեղ մի դարբաս: Դարբասի յետևում, ներսում յայնարձակ հայաթն է գեղեցիկ ծաղիկներով և մի քանի ծառերով:

Հայաթում գտնվում է աղյուսաչին մի բարձր շենք, յերկու հարկից բաղկացած:

Այդ հայաթն ու այդ շենքը պատկանելիս են յեղել Միրզա Աբաս-ողլի առունով մեկին: Միրզան հեղափոխության որերին փախել է Պարսկաստան և այնտեղ է հաստատվել:

Տուներ մնացել է անտեր և պետութունն այդ տունը վերցրել է իրեն յայտույզը, նորոգել է և քրեհով տվել:

Այժմ, այնտեղ տեղավորված է թյուրք ու պարսիկ կանանց ահումբը:

Յերեկոյան, չափազանց գեղեցիկ են յերևում լույսերն այդ շենքի յերկրորդ հարկի պատուհաններից: Դարբասից ներս են մտնում կանայք, աղջիկներ, — չաղբայրով ու առանց չաղբայի և գնում են ահումբ:

Վոչ մի տղամարդ այդ ահումբը չի մտնում: — չի կարելի: Յերբ ներսում կանայք կան, չի կարելի: Յերբեմն միայն, յերբ փակ է լինում ահումբը և ներսում վոչ վոչ չի լինում, կարելի չի գնայ անումբի վարիչի մոտ և նրա հետ միասին գնալ ահումբը տեսնելու:

Վոչ ահումբի վարիչը, — ընկերուհի Այիշեն, վոր ել կին-ամինը, շենք տապում վերացնել ահումբի այդ որենքը: Նրանք գիտեն, վոր այդ ել մեծ բան է, — թյուրք ու պարսիկ կանանց դրավել դեպի ահումբ:

Նրանք գիտեն, վոր յեթե մի որ, մի տղամարդ ներս մտնի այդ ահումբը, շատ տղամարդիկ իրենց կանանց ու աղջիկներին կարգիլեն ահումբ հաճախել:

Յեւ այդ է պատճառը, վոր Այիշեն, այն կրթված, նախապաշարմունքներից ազատ կոմունիստիկա Այիշեն, այդ խնդրով իրեն դիմող յուրաքանչյուր մարդու կարճ պատասխանում է.

— Չի կարելի:

Ահումբը տեղավորված է յերկրորդ հարկում: Ներքեվի հարկում ապրում է ահումբի ծառայող կինը և ելի մի յերկու յերեք կին:

Այնտեղ են գտնվում նաև ահումբին կից կար ու ձեվի արհեստանոցը, փոքրիկ ջուլհականոցը և պարապմունքի մի քանի սենյակներ:

Յերեկներն այդ սենյակներում լցվում են թրքուհիներն ու պարսկուհիները: Կարի մեքենաներն ու ջուլհականոցի մաքուրները չխչխկում են, իսկ մյուս սենյակներում լսվում են վորևե պարապմունքի նստած կանանց ձայները:

Մի նեղ սանդուղք, առաջին հարկից տանում է դեպի վերև, վորտեղ փոքրիկ նախասենյակում գտնվում է դուռը, վրան դրված՝ «Թրքուհիների ահումբ»:

Չորս սենյակից է բաղկացած ահումբը: Չորս գեղեցիկ սենյակներից: Նրանցից մեծը դահլիճն է, յերկուսը ազատ սենյակներ են, համաքվելու և յրուցելու համար, իսկ վերջինը ընթերցարանն է:

Բոլոր սենյակներում, պատերի վրա խփված են հեղափոխականների նրկարները: — Անին, Կլարա Յետկին, Կրուպսկայա, Լյուքսեմբուրգ...

Ահումբի ամենագեղեցիկ սենյակը դահլիճն է: Նրա առաստաղը, վոր պարթևաձև վի շեման, ամբողջապես ծածկված է փոքրիկ հայելիների համաչափ կտորներով, վորոնց մեջ րեկրեկվում են ներքեվի բոլոր առարկաներն ու մարդիկ:

Դահլիճն ունի մեկ մեծ և յերկու փոքր լուսամուտներ, զարդարված կարմիր, կապույտ և կանաչ փոքրիկ ապակիներով: Յերբ ցերեկով մեկը ներսից նայի այդ ապակիներին, — կամ գիշերով դրսից՝ յերբ ներսում լույսեր են վառում, — լուսամուտների այդ դույնազույն տեսարանը չափազանց գեղեցիկ ու գրավիչ կերևա: Կիվա, վոր դրանք վոչ թե ապակիներ են, վորոնցից լույս է թափանցում, այլ պսպղուն, գույնազույն թիթեղներ:

Դահլիճի պատերի վրա կան բազմաթիվ վորմաքանդակներ: Տեղ-տեղ, պատերի մեջ կան փոքրիկ խորություններ, վորոնք ծառայում են պահարանի տեղ: Հատակը քարից է, վորի վրա փռված են թաղիքներ:

Յերեկոյան, ահումբի ազատ սենյակներում շատ կային կանայք և աղջիկներ: Ահումբի սովորական որերից մեկն էր այդ. Ժողով կամ ներկայացում:



233354

ցում չկար: Ամեն վոք զբաղված եր մի գործով: Ծառերը դրուցում էին իրար հետ: Նրանք չաղբաները նետել էին մի կողմ: Ամենուրեք յերեվում էին թրջուհիների գեղեցիկ աչքերը և մետաքսի թեթեվ փայլ ունեցող մազերը:

Դուռն արագ բացվեց և ծիծաղելով ներս մտան Զուբեյիդան և իր ընկերուհի Ասմարը: Նրանք իրենց ձեռներում ունեյին գրքեր, տետրակներ: Նշանակում է, դպրոցից ուղիղ այդ տեղ էին յեկել:

Ներս մտան, ժպտալով ու ծիծաղելով, գրքերը դրեցին պատի դարակնիսից մեկում, Ասմարը, վոր չսպասյի տակ եր, վերցրեց չաղբան մի կողմ և նստեց:

Զուբեյիդան նույնպես նստեց:

— Ասմար, մեր աղջիկներից չկա՞ն...

— Չեն յեկել դեռ:

— Ասմար, ծիծաղում եմ, բայց չատ տխուր եմ...

— Խի՞...

— Չեմ իմանում, Ասմար...

Քիչ հետո ներս մտան յերկու կին ու մի աղջիկ: Կանայք չաղբաներով էին, իսկ աղջիկը դլխին կապել եր «Բաղդադի փուշի» թաշկինակ: Թաշկինակի տակից, քունքերի մոտ, դուրս էին պրծել նրա սև մազերը, — զարմանալի սև, գիշերվա նման մազերը: Նրա արտակարգ սպիտակ դեմքի վրա, փայլուն քարածուխի նման վառվում էին սև աչքերը: Նա ներս մտավ և մոտեցավ Ասմարին ու Զուբեյիդային:

— Աղջի՛, բարև...

Ասմարը բարեկցեց: Զուբեյիդան ցրված եր յերեվում: Մի քիչ անց, նա ևս բարձրացրեց դլուխն ու ժպտով բարևեց:

— Հը՞, Զուբեյիդա, դու քիթի խի՞ յես կախել...

— Աղջի, չեմ իմանում. հիվանդ եմ, ինչ եմ...

— Չե՞ս գալիս, դնանք «Ձանգի» կարդանք:

— Գնացեք, յես կգամ...

Ասմարն ու այդ թյուրք կոմյերիտուհին մտան ընթերցարան:

Զուբեյիդան մնաց մենակ:

Ախր ինչո՞ւ յե նա այսոր տխուր...

Դպրոցից դուրս յելավ, Ասմարի ու Նագիրի հետ գնում եր: Հետո բաժանվեց նրանցից, վոր յեթե Ահմեդն անկյունում ելի սպասելիս իննի, — մենակ հանդիպի նրան: Տեսավ: Ահմեդը չկա: Վաղ ուղեց, հասավ Ասմարին: Հետո յեկան այստեղ...

Ախր ինչո՞ւ յե տխուր...

Այսոր Ահմեդը չկար: Ե՛, չկար՝ չկար: Ի՞նչ արած: Ահմեդն իմ ի՞նչն է վոր... Աչք ունի ինձ վրա: Ի՞նչ անեմ թե աչք ունի: Լավ աղա յե, բայց վոր դեռ խամ ե, անփորձ ե... Նա վնիկ պահող է: Նա մարդ դարձող է: Աչխարքից բխաբար, անուպում... Ինքը խո նրա թայը չի՞: Ուզի՞ իրեն հետ ամուսնացող չկա՞: Են էլ ինչպիսի՞ թողաներ... Ուսումով խեղդե, հարգելի...

Զուբեյիդան գլխի փուշի ծայրն առավ մատների արանքը և սկսեց խաղացնել:

... Մենակ թե... մենակ թե յես նրան եմ սիրում:

Եսոր չկար: Ամեն որ սպասում եր: Գնում էյի, բարեկում, մի քանի խոտք ասում կամ շատում և անցնում: Ահմեդն էլ, առանց դժգոհելու, անցնում-գնում եր իրեն համար:

— Մարդ վոր դառնաս, քեզ կառնեմ, ասում եր նրան Զուբեյիդան:

... Եսոր չեկավ: Գա՞ր ընկավ մեջքին, Գարգեց: Պատի վրայից վա՞ր ընկավ: Հիվանդացավ: Ի՞նչ յեղավ:

— Մարդ դարձիր, քեզ կառնեմ...

Վո՞նց մարդ դառնա: Յես դպրոց եմ գնում, կոմսոմոլիսա ընկերներ ունեմ, ակումբ եմ գալիս... Ինքն ի՞նչ անի խեղճը... Իր որվա հացն է աչխատում, ուրիշ վոշիչ...

Զուբեյիդան անհանգիստ շարժումներ եր անում: Ապա դիմեց Ասմարին.

— Ասմար, տուն գնա՞նք...

— Ի՞նչ:

— Տուն գնա՞նք:

— Եսպես չո՞ւտ:

— Հա՛, գնանք, Ասմար:

— Գնանք:

Ասմարն ու Զուբեյիդան դուրս յեկան: Ասմարն պզու՞մ եր, վոր Զուբեյիդան տխուր է, բայց վոշիչն չեր հարցնում, հարժար բուպեյի սպասելով: Նրանք դուրս յեկան նրբանցք և նույն նրբանցքով շարունակեցին իրենց ճանապարհը:

— Աղջի, եսոր քեզ ի՞նչ է պատահել...

— Ասմար ջան, հանաք մի անի, սիրաս մի տեսակ տխուր ե...

— Խի՞...

— Դու գիտե՞ս, Ասմար, վոր յես մի սպայի գիտեմ, անունը Ահմեդ, ինքն էլ մի լավ տղա յե...

— Հը՞, հետո՞...

— Չե՛, Ասմար, գիտեմ ինչ ես ասում, բայց չե: Եդ Ահմեդն ինձ վրա աչք ունի: Լավ աղա յե, բայց կնիկ պահող դուրս չի գա: Ես մի քանի ամիս է, վոր ինձ հանդիպում է, նայում է ինձ ու կարծես հարցնում է.

— Ի՞նչ ես ասում, Զուբեյիդա:

... Յես էլ, խոտք չեմ տայիս:

— Հետո՞...

— Ամեն որ տեսնում էլի: Եղ խեղճը կտոր չկա: Չլինի՞ մի բան և պատահել: Չը՞, Ամար...

Բայց Ամարը, պատասխանի փոխարեն պինդ ծիծաղում էր: Ապու ձեռքով բամբակեց ընկերուհու գլխին:

— Դե ասա, սիրտս տաք է վրեն, ելի...

Չուրեցիդան ձայն չհանեց:

— Ի՞նչ անենք՝ թե կտոր չես տեսել: Եզուց կտեսնես: Մեկել որ կտեսնես: Չուրեցիդան դարձյալ լուռ էր:

Ամարն ուզեց նորից խոսել, բայց տեսնելով ընկերուհու տխրությունը, միայն մի քանի համողիչ խոսք ասաց ու լռեց:

Ռուսմի փողոցում, Չուրեցիդան ցտեսություն ասեց Ամարին ու մտավ խրենց տուն:

ԳԼՈՒԽ ՎԵՑՆԵՐՈՐԿ  
ՈՒՋՈՒՄ ԵՄ ԱՍԵԼ, ԳԵՏՆԱՓՈՐ ԲԱՂԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Գեանից մի մետր բարձրությամբ, դուրս են ցցված յերկու մեծ գմբեթների վերեվի մասերը: Նրանցից մեկի շուրջը կան չորս ուրիշ գմբեթներ, սակայն մեջտեղի գմբեթից ավելի ցածր: Մարդու կես բարձրությամբ, գրմբեթների մի կողմում գտնվում է փոքրիկ դռնակը: Գարե սանդուղքներն ուղիղ ներքև են իջնում, դեպի գեանի տակը:

Այդ է բաղանիքի արտաքին տեսքը:

Դեպի ներքեվ իջնող քարե սանդուղքի ցածի ծայրում նույնպես, կա մի փոքրիկ դռնակ, վոր ուղղակի բացվում է դեպի բաղանիքի հանվելու սենյակը: Դա մի մեծ, վեցանկյունանի, ընդարձակ սենյակ է, վորի առաստաղը դրսից յերեվացող մեծ գմբեթներից մեկն է:

Հատակը քարից է: Պատերն ու հատակը խոնավ, տեղ-տեղ՝ ուղղակի թաց: Սենյակի կենարոնում, քարից շինված մի ավազան կա, մինչև մարդու գոտին հասնող պատերով: Ավազանի մեջտեղի քարե դուռից դուրս է հորդում ջուրը և լցվում ավազանի մեջ:

Պատերի տակ թախտեր կան դրված — լայն, յերկար թախտեր, վորոնք միայն ընդհատվում են դռների մոտ: Մեկ՝ դեպի դուրս տանող դռան մոտ, մեկ էլ դեպի լողարան տանող դռան: Այդ թախտերը, փոքրիկ վարագույրն-

բով բաժանված են առանձին մասերի: Յուրաքանչյուր մասում, հենց թախտի վրա, գրված են փայտե նստարաններ, հանվելու և շորերը դնելու համար:

Թախտերի այդ բաժանմունքներից մեկում, փայտե դախլի,—փաշրիկ գրամարկի յետեվում ծալապատիկ նստած է մի չափ պարսիկ, բարձրահասակ տեր: Նա «Թաղանթ» է քաշում և «քյահրուբար» հատիկների չիկչիկոցը միախառնվում է դատարկ սենյակում կարկաչող ավազանի ջրի ձայնին:

Մի ուրիշ բաժանմունքում, մի ուրիշ պարսիկ, գոգնոցը կապած և սրբիչն ուսին գցած, նստած է մեծ սամովարի մոտ: Պատի վրա շինված փոքրիկ դարձակներում թեյի բաժակներ կան և ափսններ:

Մի որ լողարանը բաց է տղամարդկանց համար, մյուս որը կանանց: Յեվ այն որերին, յերբ կանայք են լողանում, դախլի մոտ նստում է բազանիքի տիրոջ կինը, իսկ սամովարի մոտ, թեյ ծախողի կինը:

Այդ որը, տղամարդկանց լողանալու որն էր: Առավոտից մինչև յերեկո, մեկ-մեկ, յերկու-յերկու կամ յերեք-յերեք ներս էյին մտնում մարդիկ ու լողանում: Ետո «մուշտարիներ» յերեկոյան էյին գալիս, ուստի և, արդեն ժամանակն էր և նրանք ուր վոր է, պիտի գային: Հաստ պարսիկը չիկչիկոցնում էր թաղանթը և առանց ներքին ու արտաքին անհանգստության, սպասում էր հաճախորդներին:

Թեյ ծախողը, բաժակները կրկին ու կրկին լվանալուց ձանձրացած, նստել և նիրհում էր:

Թախտերից մեկի վրա, հազիվ նկատելի, պառկել էյին յերկու «քիսաչիները»:

Յեվ իրոք. քիչ հետո բաղանիքն սկսվեց լցվել: Յեվ վորովհետև հինգ-չարթի յեր այդ որը, գրա համար էլ գալիս էյին ավելի շատ, քան մյուս որերը: Չե՞ վոր վաղն ուրբաթ է:

Թեյ ծախողն արթնացավ, սամովարի կրակն ուժեղացրեց: Քիսաչիներն արթնացան և աչքերը տրորելով սկսեցին սպասել: Բաղանիքի տերը հազաց:

Նա, այդ հաստամարմին պարսիկը, սիրալիք ժպիտներով դիմավորում էր գունից յուրաքանչյուր ներս մտնողին: Նրանց, ում նա ճանաչում էր անունով, «համեցեք»—ին միացնում էր նաև նրա անունը: Նրանց, ում գրպանը նա ճանաչում էր իբրև հաստ ու լիքը գրպան, հանդիպում էր ավելի սիրալիք, ավելի քաղցր խոսքերով:

- Համեցեք:
- Համեցեք, ուստա Ալի:
- Ա՛յ բարև, բարև, աչքիս վրա յեկար, Սուլեյման աղա:
- Ուման աղա՞... Ա՛յ բարև քեզ... Ես ո՞ւր ես, չե՞ս յերեկում: Յե՛ս սի, քե՞ք չունես: Լա՞վ ես: Ե՛, լավ վոր լավ ես: Փառք ալլահին:

Ուման աղան,—վաճառական Ումանը, դանդաղաբայլ ու հանգիստ վոր առաջացավ և յերբ ուզում էր թախտի վրա բարձրանալ, չգիտես վորտե՞

դից գուրս պրծավ մի փոքրիկ սողա և աթոռիկը դրեց Ումանի վոտքի տակ: Բո՛ւմանը բարձրացավ թախտի վրա:

Հանվեց, իջավ ներքեվ և չաղ մարմինը տմբոմբացնելով մտավ լողարան: Յեվ չնայած գոլորշու առաջացրած կիսամշուշին, նա տեսավ մի քանի ծանոթների ու մտաեցավ:

- Բարև:
- Բարև՛, Ուման ջան: Տե՛կ տվեք Ումանը լողանա:
- Ումանը կանգնեց ցնծուղի տակ, մի քիչ չփեց մարմինը և սպա, վոչ-թաքի նման բառաչեց:

— Քիսաչի՞...  
Քիսաչին, փայտե բարձր վոտնամանները—նալիկները հազին, ներս մը-տով և սկսեց Ումանի մարմինը տրորել:

— Հը՛, Ուման, քերինդ, յե՞րբ և,—հարցրեց նրա ընկերներից մեկը:  
Ումանը, դեմքին մի ինքնահավան արտահայտություն, ծանր պատասխանեց.

- Եսոր գիշեր...  
— Ի՞նչ ես ասում... Եսոր գիշեր...  
Մի քանիսը մոտեցան:

Ումանը, իբրև թե անփույթ և անտարբեր դեպի նրանց հետաքրքրությունը, լուռ լողանում էր:

Յեվ սկսվեց չողորթությունը: Ո՞վ գիտի, գուցե հագնվելիս, Ումանը դառնա իրենցից մեկին և ասի:  
— Դու յե՛լ արի...

Բաղանիքի լողարանը, վոր նույնպես վեցանկյունանի յեր, ուներ շորս մուշտար, վորոնք տանում էյին դեպի բաղանիքի մյուս բաժանմունքները: Նրանցից մեկում ջրամբարն էր, մյուսում՝ ավաղանը—վանան, յերբորդը՝ ցեխ քսվելու տեղը և վերջինը՝ շոգու բաղանիքը:

Ումանը քայլերն ուղղեց դեպի այդտեղ: Յերբ ներս մտավ, առաջին հասցեից չկարողացավ վոչինչ վորոչել: Ապտ նկատեց, վոր ինքը մենակ չի և ներսում մի ուրիշն էլ կա:

- Մոտեցավ նրան:
- Բարև, Բեքիր:
- Բարև, Ուման ջան:
- Վո՞նց ես:
- Լավ եմ, վրաս չունի: Դո՞ւ:
- Յե՛ս էլ լավ եմ:
- Ուման, Եսո՞ր է...
- Ը՛մ:
- Հերն ի՞նչ է ասել:

Ոսմանը զթի տակին, թեթև քմծիծաղ տվեց:

— Ի՞նչ պիտի ասի: Ինձ պես մարդուն ազջիկ և տալիս: Մարդ էջի գրկեր, պարելով եր խոսք տվեւ:

- Աղջիկը գիտե՞... .
- Թող չիմանա, վնա՞սն ինչ:
- Գիտե՞... .
- Չե:

— Յեղա՞վ, Ոսման:

— Ինչի՞: — Յես ի՞նչ գիտեմ: Հիմի յեւ խո են հին ժամանակները չե՞ն: Ո՞վ գիտի, աղջիկ և, վոր չուղեց՝ չուղեց: Չոտով կարա՞ս:

— Ի՞նչ զոռ: Բանն առանց զոռի յեւ յուս կգնա:  
— Վո՞նց:  
Ոսմանը տաքացավ:  
— Ինձ պես մարդ և առնում, խի՞ պիտի չուղի: Կհամոզե՞մ:  
— Կհամոզե՞ս:  
— Հա: Հիմի հերն տասձ կլինի: Յես եւ վոր գնացի, հարստութեանս մասին խոսք բաց կանեմ հոր հետ: Ինքը կլսի, կհամոզվի: Բար խո չի՞ — աղջիկ և:

— Վե՞րջը...  
— Վե՞րջը: Խի՞ յեմ թողնում, վոր յերկաթը սառի, — աղջիկը փոշմանի: Չեոաց մարդ կուղարկեմ, մոլլին կկանչեմ, վոր զերինը կտրի:  
Յեվ լուեց: Ինձի վրա ինքնահավան ժպիտ և այնքա՞ն մեծ հավասա դեպի իր հարստութեան ուժը:  
Դրտում, հաղնվելու տեղում, հաղնողների մեջ արդեն տարածվել եր ըուրը Ոսմանի զերինի մասին:

Յեվ յերբ Ոսմանը դուրս յեկավ լողարանից, բոլորի աչքերն ուղղվեցին դեպի նա: Իսկ ինքը, Ոսմանը, ցույց տալով թե ուշադրութուն չի դարձնում այդ բոլորի վրա, — հանդիսավոր կերպով բարձրացավ թախտի վրա, ապա բառաչեց.

- Չամաչո՞ւր... .
- Փոքր տղան վազ տվեց և մի ծալած սավան բերեց Ոսմանին:
- Յերբ Ոսմանն իր մարմինը չորացրեց, առանց սավանը վրայից վաք առնելու, նստեց և կանչեց.
- Շիրին—չայ:

Թե, ծախողը, չսպասվող արագութեամբ մաքրեց մի բաժակ, թե, 19րեց և բերեց Ոսմանին: Ոսմանը թեյը վերցրեց և սկսեց դանդաղութեամբ Փրթթացնել: Խմում եր մի կում և աչքի տակով նայում չուրջը: Խմում եր մի ուրիշ կում և ականջը սրած լսում եր խոսակցութունները, վարոնց կեանք տվելին իրեն էյին վերաբերում:

Բաղանիքի անկյուններից մեկում հաղնվելը վերջացրին բամբակադարձարանի մի քանի պարսիկ բանվորներ և մոտեցան դրամարկղին:

- Ի՞նչ տանք:
- Ինչ ուզում եք տվեք, — ըստ սովորականի ասաց բաղանիքի տերը:
- Մարդ—լլուխ քսան կոպեկ:
- Շեն մնաք:

Բանվորները վճարեցին ու դուրս յեկան, իսկ հաստ պարսիկը շարունակեց թաղրեհը չիչիկացնել և լսել:

Ոսմանը մոտեցավ պատերի վրա կախված փոքրիկ լամպերից մեկին, վառեց ծխախոտն ու ծխեց: Ապա բարձր ձայնով սկսեց խոսել բաղանիքի տիրոջ հետ, վորի դախլը գտնվում եր իր դեմուղեմը, սենյակի մյուս պատի տակ:

- Հը՞, գործերդ վո՞նց են: Մուշտարի շատ ունե՞ս:
- Ապրում ենք ելի, Ոսման աղա:

Թախտերի վրա խոսակցութունները ցածրացան. շատերն սկսեցին հետեւել բաղանիքի տիրոջ և Ոսմանի խոսակցութեան, աշխատելով վորեւ հետաքրքիր լուր վորսալ: Միայն մի քանի քմբրտաչներ, վորոնք բարձր խոսակցում էյին իրար հետ, վոչ մի մասնակցութուն ցույց չտվեցին ընդհանուր հետաքրքրութեանը:

Ոսմանը հաղնելը վերջացրեց, իջավ վաք և մոտենալով դրամարկղին, մի ուրբլիանոց դրամը դրեց բաղանիքի տիրոջ առաջ և քայլեց:

- Եվալլա՛, եվալլա՛, — ձայնեց նրա յետեվից պարսիկը:
- Իոնների մոտ Ոսմանը վճարեց զխաչու փողը, ապա հարցրեց.
- Գործ խո չունե՞ս:
- Չե, Ոսման աղա:
- Գե մի Փայտոն կանչի:

Քիչ հետո, կառքը, վառվող յերկու լապտերներով, մոտեցավ և կանգնեց բաղանիքի դռանը:

- Թուամի փողոց, — ասաց Ոսմանը:
- Կառքը բռեց:

ԳԼՈՒԽ ՅՈՒՅՐՈՐԴ,  
ՎՈՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Ե ԿԱՊՈՒՅՏ ՄՁԿԻԹԻՆ

Բազարի մոտ, հրապարակի մեջ, կազմել և կապույտ մզկիթի մեծ շենքեր աղյուսից շինված բարձր պատերով, վորոնց վրա, վերելվում, փոքրիկ պատուհաններ կան, ապակու փոխարեն լարացանցով ծածկված: Գիշերով, կապույտ մզկիթն անհրապույր է թվում իր յերեք պատերով:

Սակայն չորրորդը, — ճակատը, տարբեր է մյուսներից: Այդտեղ, դռան յերկու կողմերում, պատը զարդարված է գույնզույն շինիկ կտորներով: Գույնզույն շինիկ կտորներով են զարդարված նաև զմբեթն ու մինարեն:

Արևոտ ցերեկով կամ լուսնյակ գիշերին, մզկիթի զմբեթն ու մինարեն գեղեցիկ են փայլում իրենց նախշերով և գույնզույն, սլարսկական տառերի նկարներով:

Մզկիթի յերկու փոքրիկ դարբասները, վոր գտնվում են կողքի պատերի վրա, միշտ փակ են լինում: Բայ և միայն ճակատի դուռը, վորը մի ծածկված միջանցքով տանում է ուղիղ դեպի մզկիթի հայաթը, վորտեղ ծառեր կան և ծաղիկների մարդեր: Իսկ հայաթի կենտրոնում բառակուսի սվազանն է, — հավուզը:

Հայաթի հարավային մասը գլխավոր մզկիթն է, — աղոթարանը, իսկ նրա դիմացի՝ հյուսիսային մասը, մյուս աղոթարանը: Արևելյան և արեւ-

մտյան պատերի վրա կան իրար նման քսան-քսանչորս փոքրիկ դռներ: Գրանք խուցերի դռներն են: Այն խուցերի, ուր մի ժամանակ իջևանել են, ուխտավորները: Այժմ, այլևս ուխտավորներ չեն գալիս, իսկ խուցերում ապրում են պարսիկ ու թյուրք արհեստավորներ, բանվորներ:

Կեղտոտ, հին խուցեր են դրանք, վորտեղ ապրողները բնակարանային ծանր պայմաններից դրդվելով և միայն, վոր համաձայնվել են այդ սենյակներում մնալ: Յեվ նրանցից վորևէ մեկը, հենց վոր գտնում է մի ավելի լավ սենյակ, անմիջապես գուրս է գալիս այդտեղից և տեղափոխվում:

Իսկ նրա տեղը բռնում է մի ուրիշը:

Ապրողների մեծ մասը ամուրի բանվորներ են, վորոնք ապրում են յերեք-յերեք, չորս-չորս յուրաքանչյուր խցիկում: Բայց կան նաև ամուսնացածներ, — նույնիսկ յերեխա ունեցողներ:

Արևմտյան պատի հինգերորդ խուցում ապրում էր Ահմեդը: Նա մենակ էր իր սենյակում, վորովհետև այդ խուցը, բնակվելու համար ամենաանհարմարն էր կապույտ մզկիթի բոլոր խուցերից: Քարաշեն հատակը բոլորովին քանդուղի էր, առաստաղը նույնպես: Լուսամուտի լարացանցից յերեք-չորս լար էր մնացել միայն և քամին հաճախ փոշու հետ միասին ներս էր լցնում նաև արևներ, թղթի կտորներ, վորոնք բռնվում էին սարգի վոտայնների մեջ:

Միայն յերկու խուցեր կային մզկիթում, վորոնք շատ գեղեցիկ էին և ապրելու հարմար: Նրանցից մեկը գտնվում էր գլխավոր աղոթարանի աջ կողմում, մյուսը ձախ: Բայց այնտեղ ապրում էին վոչ բանվորներ, վոչ էլ արհեստավորներ: Մեկում մուլլան էր ապրում, մյուսում մզկիթի ծառան, — պահապանը:

Իր խուցում, հասարակ, շատ հառարակ անկողնի մեջ պառկած էր Ահմեդը:

Նա ջնջել էր:

Լուսամուտից ներս ընկած լուսնի շողքերի տակ յերևում էր Ահմեդի դեմքը, վորի վրա մերթ-մերթ յերևացող ժպիտը վկայում էր, վոր նա յերկուս է տեսնում:

Յեվ ի՞նչպես կարող էր յերազ շտեմնել: Հոգնած մտավ անկողին ու ջնջեց, մտածելով Զուբեյդայի մասին, իսկ նրա ականջներում դեռ հնչում էին աշուղի յերգերը հեքիաթական Զուբեյդայի մասին:

Հենց վոր աչքերը փակեց, նրան թվաց թե ինքը գտնվում է նորքի աղբիներից, — բաղերից մեկում: Պառկել է ծառներից մեկի տակ ու մտածում է: Հետո, հանկարծ լսեց, իբր թե մեկը քաղցր զնգզնգոցով թառ է ասում ու նվազում և «հեյդարի»: «Հեյդարի»-ի տխուր հնչյունները հասնում են իրեն և ինքը մտածում է Զուբեյդայի մասին, վոր «հեյդարի»-ից էլ գեղեցիկ է, «հեյդարի»-ից էլ քաղցր:

Հետո նրան թվաց, իբր թե նորից պառկած է իր սենյակում և իր սենյակը շատ լավ է: Ուրիշ տեղում է իր սենյակը, — վոչ մզկիթի հայաթում էլ ինքը պառկել է մաքուր անկողնի մեջ ու ջնջել է: Մեկը գուռն է թակում:

— Մ'վ է:

Լսվում է Չուբեյիդայի ձայնը:

— Բայ արա, Ահմեդ, յես գալիս եմ քեզ մոտ: Բու կինդ պիտի դառնար՝  
Նորից են թափում դուռը:

Ահմեդը վեր ցատկեց քնած տեղից, արագ մոտեցավ դուռնը և բաց արեց:

— Արի՛, անուշ Չուբեյիդա...

Թարմ ուրի հոտանքը, վոր դիպավ Ահմեդի յերեսին, սթափեցրեց նրան:  
Նա անշարժ կանգնեց դուռն մեջտեղը, դառնորեն հիասթափված քաղցր  
յերապից:

— Թխկ, թխկ, — նորից լսվեց դուռն թակոցը, բայց այս անգամ վոչ թե  
իր դուռն, այլ մոլլայի:

Ահմեդը դուրս նայեց: Յերկու մարդ թափում էին մոլլայի դուռը:

Ահա դուռը բացվեց և նրանք ներս մտան:

Ահմեդը նայեց յերկնքին: Իրիկո՞ւն է թե դիչեր: Նայեց աստղերին  
Ահմեդն ու մրմնջաց:

— Դեռ շուտ է:

Հետո հաշվեց ու տեսավ վոր ժամի տասը հաղիվ լինի և ինքը քնել է մի  
ժամից ել քել: Բայց թեև այդքան քիչ եր քնել, այնուամենայնիվ նա իրեն  
զգում եր բոլորովին կազդուրված և քնից կշաացած:

— Ե՛, է՛, է՛... ես իրիկուն Չուբեյիդային չտեսա...

Հետո մտածեց:

— Ե՛հ, մի բան, վոր նա ինձ առնողը չի...

Տեսնես Չուբեյիդան հիմի քնած է թե արթուն: Չէ՛, խի՛ պիտի  
քնած լինի: Ինքն է շուտ քնում, վոր առավոտը շուտ վեր կենա և գործի  
գնա: Չուբեյիդան շուտ ինչո՞ւ պիտի քնի: Յերեկ հիմի լուսամուտի գո-  
գում նստած, դասերն է սերտում...

Այդ միտքն հանկարծ գրավեց Ահմեդին: Շուտ է: Հիմի նա լուսա-  
մուտի գոգում նստած, դասերը սերտելիս կլինի: Ի՞նչ կլինի, յեթե դեպ  
անցնեմ լուսամուտի տակով, մի անգամ տեսնեմ Չուբեյիդային ու դա՛  
քնեմ...

Նա արագ շրվեց, ներս մտնելու և շորերը հագնելու համար: Այդ բո-  
պեյին, բացվեց մոլլայի դուռը և այնտեղից դուրս յեկան յերկու մարդն ու  
մոլլան և դնացին: Ահմեդը մի բուպե նայեց նրանց յետեվից, ապա մտավ  
ներս և սկսեց շորերը հագնել:

Յերկար է ձգվում Ռումմի փողոցը Գնտառ-չայից այն կողմ, Գնտառ-  
չային զուգահեռ: Թաղի ամենալավ փողոցը Ռումմի փողոցն է, վորի վրա  
են զանգվում կենտ-կենտ պատահող քարաչեն կամ յերկու հարկանի տները:

Ռումմի փողոցն սկսվում է գլխավոր փողոցներից մեկից զատվող մի  
ուրբանցքով և վերջանում է Գնտառ-չայի կամուրջներից մեկի-մոտ: Այդ-  
տեղից անմիջապես, սկսվում է մի նոր փողոց, վորը տանում է դեպի Ուզաի  
Անկողին բլուրը: Այդ բլուրի վրա գտնվում են վերջին տնակները, իսկ նը-  
յանցից այն կողմ ուրիշ տներ չկան և քաղաքը վերջանում է այնտեղ:

Ռումմի փողոցը նեղ փողոց է: Յեթե պատահի, վոր մի կառք անցնի  
այդ փողոցով, վտառով զնացողը պետք է սեղմվի պատերից մեկին, կառքին  
հանապարհ տալու համար:

Մայթերը չարիտանց նեղ են Ռումմի փողոցի վրա: Անցորդի միայն մի  
վտառն է լինում մայթի վրա: Բայցե՛կա նրա մյուս վտառը մնում է մայթից  
ցած, փողոցի մեջ:

Տեղ-տեղ հանգիպում են այնպիսի զառանգ պատեր և դռներ, վոր մտրդ  
ուղղակի գարձանում է, թե ի՞նչպես կարելի չէ ներս մտնել այդ դռներից:  
Թե՛լ չեն այնպիսի գռները, վորոնց բարձրությունը գետնից հասնում է մի-  
թե՛ղ մարզու կուրծքը:

Պատերը նույնպես:  
Յե՛վ թվում է, թե այդ պատերն ու դռները ժանտակների ձեռքերով շնչափած փոքրիկ խաղատներ են, ուրիշ վոչինչ:

Ու դարձանալի չէ, վոր համատարած այդ դաճաճության մեջ հանդիպող փորեք քարաչեն կամ յերկհարկանի տունը հսկա շենք է թվում անցորդի աչքին:

Փոքրիկ դռնակներին մեկի յերկաթե «չախկ»-ը, վոր փոխարինում է զանգին,—մի քանի անգամ չխկչխկաց: Փողոցի վրայի լուսամուտներից մեկի մեջ մարդկային մի սուվեր յերևաց:

— Ո՞վ է...

— Մենք ենք:

Ներսում լավեցին շուկներ.—Ումանն է...

Քիչ հետո դուռը բացվեց և Ումանը յերկու-յերեք սւրիշ մարդկանց հետ ներս մտավ:

Դուռը նորից փակվեց:

Անակնկալ այցելության առթիվ Չուրբեյի դարձացավ: Նա դատադիրը ծալեց և դրեց մի կողմ: Ումանն ի՞նչ գործ ունի իրենց տանը, վորին գեո «աղա» յել են ասում ըստ հին սովորության, մի քանի կեղծավորներ...

— Յերեսդ ցույց մի տա,—չնչաց Չուրբեյի մայրը, մոտենալով նրան:

— Ինչի՞,—զարձացած հարցրեց Չուրբեյի: Չաղբան եր պակաս...

— Աղջի, բան եմ ասում,—կրկնեց մայրը: Ես անգամին ինձ լսիր:

Բայց Չուրբեյի անկանջ շարավ և գնաց դեպի հյուսիսը, վորոնք իր հոր հետ նստած, զրուցում էին:

— Հալ, քե՛ֆ.—հարցրեց Ումանը, դիմելով Չուրբեյի հորը:

— Եարում ենք էլի, պատասխանեց նա, ձեռքերով պատ շարելու շարժումներ անելով:—Ի՞նչ վոնց ես:

— Յես էլ եմ շարում, ժպտաց Ումանը, դարակներում ավրանք շարելու շարժումներ անելով:

Ումանի ընկերները ծիծաղեցին:

Քիչ հետո, Ումանն անցավ իր ծրագրին, սկսելով խոսել կողպերատիվների մասին, վոր «մարդու տուն են քանդում», և այն մասին, վոր միայն իր նման տղամարդը կարող է դիմանալ և նույնիսկ հարստանալ:

Առաջին բույնին, Չուրբեյի վոչինչ չե՛ր հասկանում: Ինչո՞ւմ է բանը... վոր որվա սրտակից բարեկամներն են արհեստավոր Հասանն ու վաճառական Ումանը... Ուրի՛շ բան թաղելված կլինի այս այցելության տակ...

Յե՛վ քիչ հետո, յերբ Ումանը խոսք բաց արեց ամուսնության և «հեմիկի» աղջիկների մասին, Չուրբեյի ամեն ինչ հասկացավ: Նա արագ մոտեցավ մորը և քաշեց մի կողմ:

— Ես ի՞նչ ապուր եք յեփել...

Մայրը կմկմաց: Ապա նշանացի ցույց տվեց իր ամուսնուն և հասկացրեց Չուրբեյի դային, վոր վոչ թե ինքը, այլ իր ամուսինն է այս բանի պատճառը:

— Ասում է լավ մարդ է, հարուստ...

Վերջին բառի հետ միաժամանակ նա նայեց Չուրբեյի դայի աչքերին, կարծես տեսնել ուզելով իր ասածի թողած տպավորությունը:

— Ե՛հեյ... Նաղիր—Եա՛հի վախառ խո չե՞ք, բարկացավ Չուրբեյի: Ապա հանկարծակի լուեց, սպասելով վերջաբանին:

Քիչ հետո, հայրը Չուրբեյի դային կանչեց:

— Չուրբեյի դա, արի:

Չուրբեյի դան հաստատ քայլերով մոտեցավ:

— Բարև արա Ումանի հետ:

Չուրբեյի դան քմծիծաղ տվեց:

— Ի՞նչ գործ ունեմ...

Հայրը, թեև գիտեր աղջկա «բաց» բնավորությունը, այնուամենայնիվ, շատ դարձացավ:

Իսկ Ումանին շա՛տ դյուր յեկավ Չուրբեյի դայի այդ արարքը:

— Կրակի կտոր է... հուրի-փերի յե,—մտածեց նա ինքնիրեն, ցնորելով նրան ունենալու ցանկությունը:

— Դո՛նախ չե՞ս ուզում,—ժպտաց Ումանը, դիմելով Չուրբեյի դային:

— Դունն իմ տունս չի՞ խո,—հորս տունն է: Նրան ես դո՛նախ յեկել, նա յել ընդունել է: Իմ ուղե-չուղեյս մի հաշիվ չե՞:

Ասաց Չուրբեյի դան ու հեռացավ:

Ումանի սրտում կասկած ընկավ: Հաճելի արամադությունը փոխվեց վախի: Չինի՞ իսկապես, գործը փչանա...

— Չուրբեյի դա՛,—կատաղած բղավեց հայրը:

— ...ի՞նչ...

Չուրբեյի դան նորից մոտեցավ:

— Դու գիտե՞ս Ուման աղան ինչի յե յեկել:

— Չէ:

— Յեկել է քեզ առնելու:

— Ո՞ւմ... ինձ հարցրե՞լ եք... Յես կառնեմ վոր...

Չուրբեյի դայի հայրը բարկացած նայեց աղջկան, ապա ասամների արանքով, զսպված հանդարտությամբ մոմուաց:

— Կառնե՛ս...

— Չե՛մ առնի: Կին-բաժին կղիմեմ, չեմ առնի:

Կին-բաժնի անունը յսելով, հայրը բռնորովին դուրս յեկավ համբերությունից:

— Ինչ կանե՞ս, կին-բաժնի՞ն կղիմեմ... դիմիր: Կին-բաժնիք քեզ հոգ կտա՞, քեզ կպահի՞:

Չուրբեյիդան ձայն չհանեց։

Հայրն ավելի տաքացավ։

— Չեմ պահի։ Հասկան՞ում ես, շան աղջիկ, չեմ պահի։ Ի՞նչ պիտի անես, վոր չպահեմ։ Մեծ աղջիկ ես. մինչև պառավելը խո տանս մեջ չպիտի՞ մնաս։ Ամուսնացիր, ելի՛։ Պակա՞ս մարդ ե Ոսմանը։

Ոսմանն իր անունը լսելուն պես, մեջտեղ ընկավ։

— Ինչի՞ յես բարկանում խեղճ աղջկա վրա։ Գործը քաղցրութեամբ վերջացնենք։ Աղջիկ ե, կբարկանա յեւ, կհամոզվի յեւ...

Այս անգամ արդեն, Չուրբեյիդան ինքնիրենից դուրս յեկավ։ Իր գեգեցիկ աչքերն հառելով Ոսմանի և մյուսների վրա, հաստատ ձայնով ասաց։

— Վոր մեռնեք եւ, յես չեմ առնի։

Հայրը, վոր ուզում եր ինչ գնով եւ լինի համոզել աղջկան, զսպեց իր բարկութեամբ և կիսաձայն հրամայեց։

— Տանիցս կորի՛ր...

Յեզ յեղավ մի անսպասելի բան։

— Ես սահաթին, — ասաց Չուրբեյիդան և փուշին կապելով, գնաց դուրս։ Մայրն ուղեց հասնել աղջկան և կանգնեցնել, տակայն սովորինը ձայնեց նրան։

— Յերես մի տա... Իր վտառով գնաց, իր վտառով եւ կվերադառնա։

Ոսմանն ու իր ընկերները նայեցին միմյանց, դեմքերի վրա մի անտրոշ, բայց անպայման տհաճ արտահայտութիւն։ Նույնիսկ Չուրբեյիդանի հայրը մի րոպե կասկածեց, վոր իրոք, աղջիկը կարող ե չվերադառնալ։

Դուռը բացեց Չուրբեյիդան և դուրս յեկավ փողոց։ Յեզ այդտեղ, փողոցում նա անդրադարձավ ամբողջ պատահածին։

— Ի՞նչ անեմ հիմի... Ո՛ւր գնամ ես կես գիշերին...

Նա ուղեց քայլել ստաջ, բայց մեխված մնաց դուռն ճուռ։ Ու յերբ հանկարծ նայեց փողոցով դեպի վար, տեսավ թե ինչպես դեպի իրենց բունն ելին գալիս յերկու մարդ և մուլան։ Յերևի Ոսմանի հաշվով, այդքան ժամանակում նա գործը վերջացրած պիտի լիներ և մուլայի գալը պիտի լիներ ճիշտ ժամանակին։

Յեկան յերկու մարդն ու մուլան և յերբ դռնից ներս ելին մտնում, Չուրբեյիդան շարժվեց տեղից և արագ հեռացավ։

— Իա ո՛ւր գնամ...

Չուրբեյիդան իրեն հանձնեց իր վտաններին։ Թող տանեն, ուր վոր ուզում են։

Ակամա քայլում եր նա և մտածում։ Վազը կգնա կին-բաժին, կասի։ Հետո կին-բաժնից կգնան իրենց տուն, իր հորը կասեն, վոր նա իրավունք չունի աղջկան գուրս անելու։ Յեզ ինքը նորից կվերադառնա տուն։

Բայց թույն չի՞ դառնա իր կանգն իրենց տանը, վաղվանից սկսած...

— Ո՛ւր գնալ... Չե՞ վոր նույնիսկ մինչև առավոտ, մնալու վոչ մի տեղ չունի։ Ընկերուհիներին մեկի մո՞տ գնա։ Բայց չե՞ վոր, բոլոր ընկերուհիներն եւ ծնողներ ունեն և այդ ծնողները հաղիվ թե ներս ընդունեն տանից դուրս արվածին։

Այսոր յերեկոյան, հենց սկզբից ամեն ինչ թարսվեց։ Դպրոցից դուրս յեկավ՝ Ահմեդը չկար։ Ակումբ գնաց—տխրեց։ Տանը՝ այս խայտառակ պատմութիւնը։

Աշխարհի վրա ո՞վ կա իրեն սրտակից ու հախտարիմ։ Ո՛ւր ունի Չուրբեյիդան աշխարհիս յերեսին։ Բոլորովին մենակ չե՞ նա։

Նրա մտքով անցան ակումբը, կին-բաժինը, այդա Ահմեդը։

Նա հիշեց Ահմեդին։

Մի՞թե նա իրեն գրկարաց չի ընդունի...

Չուրբեյիդան շտապունեց, կես գիշերին իր սիրած մարդու դուռը թափելու գաղափարից։ Նրա մարմնով անցավ մի դռն, հաճելի, բայց վեհերոտ...

— Մարդ դարձիր...

— Յե՛ս մարդ կդարձնեմ նրան, մտածեց Չուրբեյիդան։ Չե՞ վոր յես նրանից ավելի ունումով եմ և աշխարհից խաբար։ Յես նրան կոգնեմ։

Կայծակի պես անցան նրա աչքի առաջից մի քանի մտապտակներ։ Ահա ինքը, փաթաթվել և Ահմեդի վրով և նրան պատմում ե մի լավ, ավելի լավ կյանքի մասին։ Ահա նա Ահմեդին սովորեցնում ե, թե ինչպես պետք ե անել, վոր լարացանցը պակամ լուսամտից փռչին ներս շքովի և սորովի փոստայներ չլինեն։

Տարված այդ մտապտակներով, Չուրբեյիդան թվաց, թե իրոք, գեմից մոտենում ե ինքը, Ահմեդը։

Չուրբեյիդան մոտեցավ և նրան թվաց, թե Ահմեդն եւ և մոտենում իրեն։

— Չուրբեյիդա՞...

— Ահմե՞դ... Ահմե՞դ, գո՛ւ յես։

— Յես եմ Չուրբեյիդա։ Ո՛ւր ես կես գիշերին։

Չուրբեյիդան ձայն չհանեց։ Մի րոպե նա լուս կանգնած եր, կարծես ինչ-վոր բանի մասին լուրջ մտածելով։ Լուս եր նաև Ահմեդը։

Այս Չուրբեյիդան մի վճռական շարժում արեց, բանեց Ահմեդի ձեռքը և ձեռքը գեպի կապույտ մզկիթի ճանապարհը։

— Գնա՛նք։

— Ո՛ւր, Չուրբեյիդա...

— Գնանք տուն...

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ ՄԿՐՏԻԶ ԱՐՄԵՆԻ՝

ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ

1. Շիրկանալ . 15 էջ . Լեհիմական . 1925 թ . գինը 15 կոպեկ .
2. Կոմսամոլիա . 47 էջ . Յերևան . 1926 թ . գինը 35 կոպեկ .
3. Յերկաքավորվող յերկրի յերգեր . 22 էջ . Յերևան , 1927 թ . գինը 20 կոպեկ .
4. Յերկու մայր . 32 էջ . Յերևան , 1927 թ . գինը 20 կոպեկ .
5. Զուբեյիդա . 34 էջ . Յերևան , 1928 թ . գինը 20 կոպեկ .
6. Պատմվածքներ . (տպագրվում է) .

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

7. Կ. Մակավեյեվ . Պիոներական կենդանի լրագրեր . 68 էջ . Յերևան , 1927 թ . գինը 20 կոպեկ .
8. Ֆ. Նանսեն . Գիշերվա հավարի և սառուցների մեջ . I հատոր . Յերևան , 1927 թ . գինը 60 կոպեկ .

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

9. Լեհիմը Պատկազմում . 23 էջ . Լեհիմական , 1924 թ . գինը 25 կոպեկ .

Մի գիշերում յես տեսա և լսեցի այս ամենը . և յուրաքանչյուր հարկի առկ էլյանքի յերակն եր բարախում :

Յես պատմեցի միայն մի պատմութիւն , — միայն մի փոքր պատմութիւն : Բայց քանի՜ այդպիսիներն են տեղի ունենում յուրաքանչյուր ուր , յուրաքանչյուր գիշեր :

Կապույտ մզկիթի խուցերից մեկը նոր շունչ մտավ : Ահմեդին թվաց թե արև մտավ իր մթին սենյակը : Յեզ վորքան . ել գեղեցիկ յինն կապույտ մզկիթի՝ գմբեթի . գույները , այնուամենայնիվ , հենց նույն կապույտ մզկիթի ներսում ածում է նրան յոլորտվին խարխուղ , իր փառքից բոլորովին զրկող ուժը :

Քաղաքն այնպիսիում է ծայրեծայր , կենտրոնից . մինչև ծայրամասերը : Ամենուրեք յեղնում է նոր ուժը : Ամբողջ գիշերը՝ յես լսում ելի այդ ուժի յերգը և այդ իմ պարտականութիւնն էր , — իմ իրավունքը . . .



«ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՅԼՇԵՎԻԿ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Ե՛

№ 1. Հ. Ագառյան. Աշխատավարձի խնդիրը և նրա եվոլյուցիան խորհրդային կարգերում.

Հետեզհետե տպագրվելու յեն «Յերիտասարդ Բայլշևիկ»-ի գրադարանի մյուս գրքույկները. գրական-գեղարվեստական, փառափական-տնտեսական և կուլտուրիական բովանդակությամբ:




22096

30

113

ԳԻՆՐ 20 ԿՈՊԵԿ



ՇԱՊԻԿ

ՇԱՎԱՐՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ